

1.3. Գներ և սակագներ

Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2003թ. հունվար-նոյեմբերին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	104.1	97.0	100.0	99.6	100.2	100.8
Փետրվար	98.5	105.7	100.3	100.2	102.5	99.5
Մարտ	99.5	100.0	100.0	100.6	100.0	100.6
Ապրիլ	102.0	102.5	100.0	100.0	98.3	98.6
Մայիս	101.2	108.1	99.9	99.6	97.4	98.0
Հունիս	101.4	95.0	99.9	99.8	81.0	102.7
Հուլիս	94.5	103.6	100.0	100.1	71.1	101.5
Օգոստոս	97.7	97.7	100.0	98.3	79.4	100.6
Սեպտեմբեր	102.5	99.3	102.3	101.0	103.3	97.8
Հոկտեմբեր	99.9	100.3	100.2	98.4	101.6	99.7
Նոյեմբեր	102.2	106.6	100.1	97.7	102.9	103.7
Նոյեմբերը 2002թ. դեկտեմբերի նկատմամբ	103.3	121.2*	102.6	95.3	100.8*	105.2*
2003թ. հունվար-նոյեմբերը 2002թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ	104.4	107.7	101.3	101.4	108.4	106.6

*) 2003թ. նոյեմբերի և 2002թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:

³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:


⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքների իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 2002-2003թթ. հունվար-նոյեմբերին


(նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, %)



Արտարժույթային շուկա: 2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ սպառողական և արտարժույթի շուկաներում գրանցվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի համապատասխանաբար 2.2% և 0.05% հավելում: Նոյեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 3.3% հավելումն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 3.5% նվազումով:

2002թ. նույն ժամանակահատվածում սպառողական գների 1.6% նվազման պայմաններում գրանցվել է հաշվարկային փոխարժեքի 3.4% հավելում: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2003թ. նոյեմբերին կազմել է 564.39 դրամ, ինչը 3.4% ցածր է 2002թ. նոյեմբերի համապատասխան ցուցանիշից (584.1 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2002-2003թթ. հունվար-նոյեմբերին
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



Սպառողական գներ: ՀՀ սպառողական շուկայում 2003թ. հոկտեմբերին արձանագրված գնանկմանը նոյեմբերին հաջորդել է 2.2% սղաճ, ինչը մեծապես պայմանավորվել է հացամթերքի որոշ տեսակների, ինչպես նաև մրգի և բանջարեղենի նկատելի գնաճով: Նշված ժամանակահատվածում հացի, ալյուրի և մակարոնեղենի ընդհանուր գնաճը կազմել է 3.3%: Սպառողական զամբյուղում ունակով 14.79% տեսակարար կշիռ, նշված ապրանքատեսակների գնաճը նպաստել է սպառողական գների աճին 0.5 տոկոսային կետով, ուստի առանց վերը նշված ապրանքատեսակների գնային փոփոխությունների սպառողական գների ինդեքսը հանրապետությունում կկազմեր 101.7%: Նոյեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ նշված ապրանքատեսակների գնաճը կազմել է 25.0%, այսինքն առանց վերը նշված ապրանքատեսակների գնային փոփոխությունների սպառողական գների ինդեքսը հանրապետությունում կկազմեր 99.57%:


Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գնաճը նոյեմբերին հոկտեմբերի համեմատ կազմել է 3.3%, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.5%, իսկ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 0.2% նվազում:

Սպառողական գների ինդեքսը 2003թ. նոյեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 103.3%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 104.6%, ոչ պարենային ապրանքներինը՝ 99.9%, ծառայությունների սակագներինը՝ 101.4%:

2003թ. հունվար-նոյեմբերին սպառողական գների միջին ամսական հավելումը կազմել է 0.3%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.15% նվազման դիմաց:

Սպառողական գների հավելաճը 1995-2003թթ. նոյեմբերին


(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



2003թ. նոյեմբերին 2002թ. նոյեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 107.0%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 110.0%, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.1%, ծառայությունների սակագներինը՝ 101.4%, իսկ հունվար-նոյեմբերին 2002թ. հունվար-նոյեմբերի համեմատ, համապատասխանաբար, 104.4%, 105.6, 102.0 և 101.9%:

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2003թ. հունվար-նոյեմբերին

(նախորդ ամսվա համեմատ, %)



Պարենային ապրանքների գներ. 2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում պարենային ապրանքների գներն աճել են 3.7%, ինչը հիմնականում հացամթերքի, ձվի, բանջարեղենի և մրգի նկատելի գնաճի արդյունք է:


2003թ. հունիս-նոյեմբերին հացամթերքի ապրանքախմբում գրանցվել է 21.0% ընդհանուր գնաճ, ընդ որում նոյեմբերին գնաճը կազմել է 2.8%: Վերջինս մեծապես պայմանավորվել է ալյուրի՝ 3.8%, մակարոնեղենի՝ 3.5%, հացի՝ 3.0% գնաճով: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում գրանցվել է հացամթերքի 1.8-4.8% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Սարտունիում: Մայրաքաղաքում հացամթերքի գնաճը կազմել է 2.9%:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2003թ. նոյեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 9.7% գնանկում, ինչը 3.0 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (6.7%): Նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բանջարեղենի

և կարտոֆիլի 23.1% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է լուլիկի (2.8 անգամ), գլուխ սոխի (2 անգամ), կանաչ պղպեղի (2.1 անգամ), սմբուկի (79.5%), վարունգի (74.3%), ծաղկակաղամբի (47.2%) գնաճով: Նշված ժամանակահատվածում կաղամբի, ճակնդեղի, կարտոֆիլի, գազարի գներն աճել են 2.7-14.0%: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 7.6-28.7% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Երևանում:

Բանջարեղենի և կարտոֆիլի գների ամսական փոփոխությունները 2001-2003թթ. հունվար-նոյեմբերին


(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2003թ. նոյեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ մրգի գնանկումը կազմել է 11.5%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 5.6% գնաճի դիմաց: 2003թ. հուլիս-հոկտեմբերին հանրապետությունում գրանցված 51.3% գնանկմանը նոյեմբերին հաջորդել է 13.6% գնաճ: Նշված ժամանակահատվածում խնձորի, տանձի, խաղողի գնաճը կազմել է 8.5-12.4%: Ներմուծված (ցիտրուսային և արևադարձային) մրգից կիտրոնի, ադամաթզի, մանդարինի գներն աճել են 0.4-45.7%: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում նոյեմբերին մրգի գնաճը կազմել է 0.4-35.4%, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Կապանում: Մայրաքաղաքում մրգի գնաճը կազմել է 15.4%:

Մրգի գների փոփոխությունները 2001-2003թթ. հունվար-նոյեմբերին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2003թ. նոյեմբերին շարունակվել է օգոստոս-հոկտեմբերին գրանցված ձվի գնաճի միտումը և 4 ամիսների ընդհանուր գնաճը կազմել է 13.4% (նոյեմբերին հոկտեմբերի համեմատ գրանցվել է ձվի 7.5% գնաճ): Հանրապետության դիտարկված 5 քաղաքներում արձանագրվել է ձվի 3.4-11.7% գնաճ, ք. Վաղարշապատում՝ 1.5% գնանկում, իսկ մյուս 4 քաղաքներում պահպանվել է հոկտեմբերին գրանցված գների մակարդակը:

Կաթնամթերքի գնաճը 2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ կազմել է 1.0%, ինչը մեծապես պայմանավորվել է թարմ կաթի՝ 3.3% և մածուկի՝ 2.6% գնաճով:

2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ ոչ ոգելից խմիչքի, այլ մթերքի, հրուշակեղենի, կենդանական և բուսական յուղի ապրանքախմբերում գրանցվել է 0.1-0.4.% գնաճ:

2003թ. օգոստոս-նոյեմբերին արձանագրվել է շաքարավազի 5.2% ընդհանուր գնանկում, ընդ որում նոյեմբերին գնանկումը կազմել է 1.6%:

2003թ. նոյեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է մսամթերքի 6.2% գնաճ, իսկ հոկտեմբերի համեմատ՝ 0.9% գնանկում: Դրան մեծապես նպաստել է ոչխարի՝ 4.4%, տավարի՝ 3.0%, խոզի՝ 2.5% մսի գնանկումը: Հանրապետության դիտարկված 5 քաղաքներում արձանագրվել է մսամթերքի 2.2-0.5% գնանկում (մայրաքաղաքում գնանկումը կազմել է 1.3%), իսկ մյուս 5-ում՝ 0.3-1.8% գնաճ:

Սուրճի, թեյի կակաոյի ապրանքախմբում 2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ գրանցվել է 0.6% գնանկում:

2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ ոգելից խմիչքի և ծխախոտի գնաճը կազմել է 0.3%, ընդ որում եթե ծխախոտի գները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ, ապա ոգելից խմիչքի գնաճը կազմել է 2.3%, իսկ 2002թ. դեկտեմբերի համեմատ՝ 23.4%:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%)

	2003 թվականի				հունվար-նոյեմբերի 2002թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը			2002թ. նոյեմբերի նկատմամբ	
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հոկտեմբերի նկատմամբ	2002թ. նոյեմբերի նկատմամբ		
Պարենային ապրանքներ					
(ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	104.6	103.3	110.0	105.6	
Պարենային ապրանքներ	104.8	103.7	110.9	106.3	
հացամթերք	120.5	102.8	120.6	106.6	
մսամթերք	106.2	99.1	108.7	105.1	
ծկնամթերք	77.7	99.1	120.9	109.6	
կաթնամթերք	95.9	101.0	97.6	97.4	
ծու	86.1	107.5	107.5	102.6	
կենդանական և բուսական յուղ	105.9	100.4	107.1	103.7	
միրգ	88.5	113.6	108.0	122.3	
բանջարեղեն և կարտոֆիլ	90.3	23.1	106.0	111.5	
շաքարավազ	97.2	98.4	99.3	102.3	
սուրճ, թեյ, կակաո	100.4	99.4	101.3	100.2	
հրուշակեղեն	100.5	100.2	101.2	101.7	
այլ մթերք	98.6	100.1	98.6	99.1	
ոչ ոգելից խմիչք	102.6	100.1	102.9	102.4	
Ոգելից խմիչք և ծխախոտ	102.7	100.3	103.1	99.7	

Ոչ պարենային ապրանքների գներ: 2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցված 0.5% գնաճի վրա իր ազդեցությունն է ունեցել վառելիքի 6.2% գնաճը, ինչը վառելավիայտի 23.4% թանկացման արդյունք է: Նշված ժամանակահատվածում հեղուկ գազի գնաճը կազմել է 4.2%, նավթինը՝ 0.9%:

Կոշկեղենի, հագուստի և կտորեղենի, դեղամիջոցների, անձնապիտո ապրանքների ապրանքախմբերում 2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ գրանցվել է 0.2-1.2% գնաճ, կահույքի, ոսկերչական, այգեգործական, մշակույթի ապրանքների, կենցաղային էլեկտրա-ապրանքների, գրենական պիտույքների, գորգեղենի ապրանքախմբերում՝ 0.4-0.1% գնանկում, իսկ հետազոտվող մյուս ապրանքախմբերում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ բենզինի գինը նվազել է 0.6%, իսկ դիզելային վառելիքի գծով գրանցվել է 7.3% գնաճ: 2002թ դեկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գնաճը կազմել է, համապատասխանաբար, 4.1% և 17.9%:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(%)

	2003 թվականի			հունվար-նոյեմբերը 2002թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը			
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հոկտեմբերի նկատմամբ	2002թ. նոյեմբերի նկատմամբ	
Ոչ պարենային ապրանքներ	99.9	100.5	100.1	102.0
<i>այդ թվում՝</i>				
հագուստ և կտորեղեն	99.2	103.0	99.5	101.9
վառելիք	99.9	106.2	104.0	121.2
կահույք	97.6	99.6	98.0	100.8
գորգեղեն	102.7	99.9	103.2	103.7
տեքստիլեղեն	98.9	100.0	99.6	99.3
կենցաղային էլեկտրաապրանքներ	94.9	99.8	95.4	96.9
խոհանոցային սպասք	101.1	100.0	101.6	102.1
լվացամիջոցներ	101.3	100.0	101.3	100.5
շինանյութեր	98.9	100.0	99.1	99.1
այգեգործական ապրանքներ	106.3	99.7	106.1	100.3
դեղամիջոցներ	94.0	100.3	93.7	94.3
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	105.1	100.3	105.0	108.3
մշակույթի ապրանքներ	96.1	99.7	96.3	99.0
գրենական պիտույքներ	100.2	99.9	100.2	99.4
գեղահարդարման ապրանքներ	100.6	100.0	100.3	100.8
ոսկերչական ապրանքներ	115.4	99.7	116.5	118.4
անձնապիտո ապրանքներ	99.1	101.2	99.2	100.5

Ծառայությունների սակագներ: 2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ ծառայությունների ոլորտում նկատելիորեն նվազել են կապի ծառայությունների սակագները (3.0%): Նշված ժամանակահատվածում կրթության համակարգի, հանգստի կազմակերպման, տրանսպորտի, կենցաղային ծառայությունների սակագները նվազել են 0.2-0.1%:

Մշակույթի ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 18.3% հավելաճ՝ պայմանավորված թատրոնի տոմսերի արժեքի 49.1% հավելաճով: Հանրային սննդի ծառայությունների սակագների հավելաճը կազմել է 0.5%, իսկ բնակարանային-կոմունալ, բուժսպասարկման, իրավական ու բանկային ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(%)

	2003 թվականի			հունվար-նոյեմբերը 2002թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը			
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հոկտեմբերի նկատմամբ	2002թ. նոյեմբերի նկատմամբ	
Ծառայություններ, ընդամենը այդ թվում՝	101.4	99.8	101.4	101.9
կենցաղային	99.2	99.9	99.3	99.8
բնակարանային-կոմունալ	100.0	100.0	100.0	100.0
բուժսպասարկման	101.0	100.0	101.0	100.1
տրանսպորտի	105.7	99.9	105.6	104.6
կապի	100.7	97.0	100.7	107.9
մշակույթի	122.1	118.3	122.1	107.1
կրթության համակարգի	98.6	99.8	99.3	102.1
հանգստի կազմակերպման	98.9	99.8	99.1	100.3
հանրային սննդի	104.1	100.5	103.9	102.7
իրավական և բանկային	99.8	100.0	99.8	99.9

Սպառողական զների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: 2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում դիտարկված բոլոր քաղաքներում սպառողական զներն աճել են 1.4-3.0%, ընդ որում գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Վանաձորում: Մայրաքաղաքում սպառողական զներն աճել են 2.4%:

ՀՀ հետազոտվող բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2002-2003թթ. նոյեմբերի 30-ի դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
2002թ.¹										
ՀՀ, ընդամենը	1105	1252	1351	624	451	258	172	136	64	288
Երևան	1092	1296	1367	629	452	257	181	142	68	288
Գյումրի	1050	1238	1313	610	438	263	150	125	48	313
Վանաձոր	1100	1050	1250	636	443	250	150	135	53	280
Վաղարշապատ	1200	1200	1250	530	450	260	180	100	50	280
Թալին	1150	1200	1430	600	450	260	160	140	70	300
Դիլիջան	1200	1200	1325	639	425	263	180	150	50	300
Հրազդան, Չարենցավան	1183	1253	1300	645	450	255	174	127	60	230
Եղեգնաձոր	1100	1300	1500	660	450	260	200	150	90	250
Մարտունի	1000	1200	1400	650	500	270	120	120	60	350
Կապան	1180	1200	1480	630	450	272	152	138	92	280
2003թ.										
ՀՀ, ընդամենը	1174	1233	1536	668	528	254	134	293	87	220
Երևան	1158	1233	1533	659	536	255	142	286	103	205
Գյումրի	1163	1288	1513	660	550	275	103	283	50	225
Վանաձոր	1166	1166	1483	646	501	235	120	316	66	255
Վաղարշապատ	1300	1250	1450	680	550	240	120	300	70	250
Թալին	1300	1150	1800	750	500	250	130	300	60	275
Դիլիջան	1200	1200	1550	700	525	255	150	300	50	300
Հրազդան, Չարենցավան	1200	1275	1500	675	520	250	130	300	80	190
Եղեգնաձոր	1200	1200	1500	650	500	250	150	300	100	250
Մարտունի	1100	1200	1600	700	500	250	95	300	40	280
Կապան	1200	1300	1620	712	450	266	148	350	76	200

¹ 2002թ. գների դիտարկումը կատարվել է նոյեմբերի 29-ին:

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1 կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2003թ. նոյեմբերի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6127 դրամ, ինչը 7.5% գերազանցել է նույնաժամանակահատվածի 2002թ. նոյեմբերի 29-ին արձանագրված ընդհանուր արժեքը (5701 դրամ):

Հանրապետությունում դիտարկված 8 քաղաքներում 2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.4-0.8% գնաճ (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Կապանում), իսկ Թալին և Դիլիջան քաղաքներում՝ համապատասխանաբար 0.2% և 0.6% գնանկում: Երևանում ոչ պարենային ապրանքների գնաճը կազմել է 0.5%:

Որոշ ոչ պարենային ապրանքախմբերի գների փոփոխությունները 2003թ. նոյեմբերին ըստ դիտարկվող քաղաքների

(Ուստի տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)

	Հագուստ և կտորեղեն	Կոշիկեղեն	Վառելիք	Տեքստիլեղեն	Դեղամիջոցներ	Սշակույթի ապրանքներ	Գրենական պիտույքներ	Գեղահարդարման ապրանքներ
ՀՀ, ընդամենը	99.2	100.4	99.9	98.9	94.0	96.1	100.2	100.6
Երևան	98.5	99.3	98.0	98.2	93.7	95.0	99.5	101.0
Գյումրի	99.5	99.4	97.0	100.0	97.7	94.4	100.5	99.2
Վանաձոր	98.5	100.6	104.7	100.4	92.7	98.1	100.8	103.2
Վաղարշապատ	101.8	104.7	102.1	100.3	90.7	103.8	101.2	97.6
Թալին	98.7	101.3	91.9	99.1	100.6	99.5	103.8	99.7
Դիլիջան	97.1	98.9	105.6	96.9	101.5	99.5	100.6	97.0
Հրազդան, Չարենցավան	102.0	102.5	104.3	101.9	93.3	97.5	100.0	100.5
Եղեգնաձոր	101.3	100.8	97.5	102.0	88.6	102.2	102.1	105.7
Մարտունի	99.9	102.4	108.5	97.1	95.3	97.5	103.3	99.4
Կապան	101.4	108.4	108.2	99.3	89.1	90.5	101.3	99.7

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետության դիտարկված 7 քաղաքներում գրանցվել է սակագների 0.4-0.1% նվազում: Գյումրի և Վանաձոր քաղաքներում արձանագրվել է սակագների, համապատասխանաբար, 0.2% և 0.1% հավելաճ, իսկ ք. Դիլիջանում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2003թ. նոյեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկվող քաղաքների

(%)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում				ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից		ոչ պարենային ապրանքների	
			պարենային ապրանքների	ոգելից խմիչք և ծխախոտ		
ՀՀ, ընդամենը	103.3	103.7	104.8	102.7	99.9	101.4
<i>այդ թվում</i>						
Երևան	102.8	103.3	104.4	103.1	99.3	100.5
Գյումրի	101.8	101.5	101.8	100.9	100.4	103.1
Վանաձոր	104.1	104.3	105.7	101.7	100.2	102.9
Վաղարշապատ	105.3	106.0	108.3	100.0	100.1	102.0
Թալին	105.0	105.7	107.3	103.6	100.3	102.2
Դիլիջան	105.4	106.3	108.4	102.5	99.8	101.6
Հրազդան, Չարենցավան	101.5	101.4	101.0	104.9	101.5	101.9
Եղեգնաձոր	105.1	105.8	107.4	103.2	101.0	102.0
Մարտունի	107.2	107.9	110.3	102.5	101.3	104.3
Կապան	103.3	103.5	104.3	101.2	101.5	102.5


Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը: 2003թ. նոյեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գնաճը կազմել է 21.2% և գերազանցել է 2002թ. նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը 20.1 տոկոսային կետով (1.1%):

Նոյեմբերին հոկտեմբերի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գնաճը կազմել է 6.6%, ինչը հիմնականում պայմանավորվել է այլ արդյունաբերական արտադրության (ոսկերչական արտադրության) գնաճով:

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի (%)

	2003 թ վ ա կ ա ն հ			2002թ. հունվար-նոյեմբերը 2001թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը		հունվար-նոյեմբերը 2002թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ	
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հոկտեմբերի նկատմամբ		
Ամբողջ արդյունաբերությունը	121.2	106.6	107.7	102.8
<i>այդ թվում</i>				
էլեկտրաէներգետիկա	97.3	103.8	100.5	101.7
գունավոր մետալուրգիա	178.7	118.8	141.7	121.0
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	109.2	95.4	114.4	100.5
մեքենաշինություն	92.5	99.3	96.1	97.6
այլ արդյունաբերական արտադրություն (ոսկերչական արդյունաբերություն)	149.0	130.9	79.6	93.7
անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի արդյունաբերություն	107.4	100.0	105.0	99.4
շինանյութերի արդյունաբերություն	108.9	98.0	104.6	98.0
թեթև արդյունաբերություն	66.3	91.3	93.3	103.8
սննդի (ներառյալ այլուրի ու համակցված կերերի) արդյունաբերություն	118.2	101.8	106.6	99.6
հրատարակչական գործերի արտադրություն	84.2	95.8	101.7	104.4

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսներն ըստ արդյունաբերության ճյուղերի (2003թ. նոյեմբերը նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ, %)




- 1-Էլեկտրաէներգիա
- 2-Գունավոր մետալուրգիա
- 3-Քիմիական և նավթաքիմիական արդյունաբերություն
- 4-Մեքենաշինություն
- 5-Այլ արդյունաբերական արտադրություն
- 6-Անտառային, փայտամշակման, թղթի- ցելյուլոզի արդյունաբերություն
- 7-Շինանյութերի արդյունաբերություն
- 8-Թեթև արդյունաբերություն
- 9-Սննդի արդյունաբերություն
- 10-Հրատարակչական գործերի արտադրություն
- 11- ՀՀ, ընդամենը

Բեռնափոխադրումների սակագների ինդեքս: 2003թ. նոյեմբերին 2002թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների 4.7%, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 2.3% նվազում: Վերջինս հիմնականում պայմանավորվել է օդային և խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների համապատասխանաբար 5.2% և 2.4% նվազումով: Նշված ժամանակահատվածում երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նվազել են 2.1%, իսկ ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելաճը կազմել է 2.0%:

Տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների ինդեքսները 2002-2003թթ. հունվար-նոյեմբերին


(Նախորդ տարվա հունվար-նոյեմբերի նկատմամբ, %)



Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսները: 2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղատնտեսական մթերքի 2.9% իրացման գնաճ, ինչը իրացման բոլոր ուղղություններով գյուղատնտեսական մթերքի իրացման 2.8-3.0% գնաճի արդյունք է:

Գյուղմթերքի իրացման գների ինդեքսները ԶԶ մարզերում 2003թ. նոյեմբերին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի

(Նախորդ ամիսը = 100,0)



Գյուղատնտեսական մթերքի իրացման միջին գները ՀՀ-ում 1998-2003թթ. նոյեմբերին

(դրամ)

	Չափի միավորը	1998	1999	2000	2001	2002	2003
Ցորեն	կգ	103	98	97	94	80	127
Գարի	- ,, -	103	71	76	74	76	99
Լոբի	- ,, -	294	322	369	422	369	386
Կարտոֆիլ	- ,, -	90	82	81	96	121	92
Կաղամբ	- ,, -	44	27	45	30	43	39
Գազար	- ,, -	54	44	70	47	49	89
Գլուխ սոխ	- ,, -	90	55	124	94	77	150
Խնձոր	- ,, -	101	101	96	113	128	143
Տանձ	- ,, -	126	98	111	116	131	127
Խաղող	- ,, -	248	157	127	153	188	207
Մեղր	- ,, -	2426	2419	2529	2706	2477	2421
Միս տավարի	- ,, -	816	824	675	824	849	935
նշխարի	- ,, -	757	763	694	799	859	898
խոզի	- ,, -	1046	861	891	1011	877	1033
Կաթ	լ	114	123	113	119	114	115
Մածուն	- ,, -	179	177	174	187	175	180
Պանիր (յուղոտ)	կգ	936	861	841	825	755	797
Չու	հատ	52	49	44	44	46	46
Միամյա խոտեր	կգ	20	20	26	21	22	28
Բազմամյա խոտեր	- ,, -	24	25	27	23	30	31

2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում բուսաբուծական մթերքի իրացման գնաճը կազմել է 3.2%, ինչը հիմնականում պայմանավորվել է մրգի (7.7%) և կերային մշակաբույսերի (15.7%) գնաճով: Նշված ժամանակահատվածում տեխնիկական մշակաբույսերի, բանջարեղենի և հացահատիկային մշակաբույսերի իրացման գներն աճել են 1.2-3.1%, իսկ մեղրի գինը նվազել է 5.1%:

Անասնապահական մթերքի իրացման գները 2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ աճել են 2.6%, պայմանավորված կաթնամթերքի (6.0%) և բրդի (29.0%) իրացման գնաճով: Մսի և ձվի իրացման գնաճը կազմել է համապատասխանաբար 1.5% և 2.3%:

Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի

(%)

	2003 թ վ ա կ ա ն ի			2002թ. հունվար-նոյեմբերը 2001թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը		հունվար-նոյեմբերը 2002թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ	
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հոկտեմբերի նկատմամբ		
ՀՀ, ընդամենը	100.8	102.9	108.4	102.6
այդ թվում՝				
Արագածոտն	98.8	105.1	109.4	102.8
Արարատ	95.0	101.7	114.4	111.3
Արմավիր	102.1	102.5	102.8	107.2
Գեղարքունիք	85.3	99.8	104.5	103.9
Լոռի	101.9	97.6	104.9	96.9
Կոտայք	100.6	100.2	107.9	100.1
Շիրակ	112.5	104.4	107.9	97.2
Սյունիք	102.6	104.6	110.6	96.4
Վայոց ձոր	104.4	102.4	111.6	99.1
Տավուշ	125.2	96.5	106.7	95.0

2003թ. նոյեմբերին 2002թ. նոյեմբերի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը կազմել է 108.8%, այդ թվում բուսաբուծական մթերքինը՝ 100.6%, անասնապահական մթերքինը՝ 114.7%, իսկ հունվար-նոյեմբերին 2002թ. հունվար-նոյեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 108.4, 108.6 և 108.3%:

2003թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման 3.7% գնաճ, ինչը էներգիայի և քսայուղերի՝ 4.0%, շինանյութերի՝ 8.1% գնման գների և գյուղատնտեսական վճարովի ծառայությունների սակագների՝ 22.8% հավելաճի արդյունք է: Անասունների, պարարտանյութերի, անասնակերի, գյուղատնտեսական մանր գործիքների, սերմացուների և տնկիների ապրանքախմբերում գրանցվել է 9.1-0.6% գնանկում, իսկ բույսերի պաշտպանության միջոցների գների մակարդակը հոկտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ:

Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի

(%)

	2003 թ վ ա կ ա ն ի			2002թ. հունվար-նոյեմբերը 2001թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը		հունվար-նոյեմբերը 2002թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ	
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հոկտեմբերի նկատմամբ		
ՀՀ, ընդամենը	105.2	103.7	106.6	101.3
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	101.5	97.0	105.8	100.8
Արարատ	97.1	100.2	103.6	101.7
Արմավիր	117.7	108.1	106.7	99.0
Գեղարքունիք	103.3	103.5	106.1	103.2
Լոռի	104.8	101.1	108.2	101.9
Կոտայք	102.6	100.4	106.6	99.2
Շիրակ	106.8	104.6	106.2	99.4
Սյունիք	100.8	101.0	107.8	98.1
Վայոց ձոր	105.1	104.8	105.6	97.5
Տավուշ	108.7	113.2	106.6	99.9